

Ք. Լ. ՉՈՒԳԱՍՋՅԱՆ

ՀԱՅ – ՊԱՐՍԿԱԿԱՆՔ

1. Սաադին հայ միջնադարյան գրականության մեջ

Ինչի՞նչ են պետք պահված վարդերն այս գառամ,
վերցրու մի թերթ «Գուլեսթանից» անթառամ,
Հինգ կամ վեց օր կապրի վարդը հագիվեազ,
«Գուլեսթանը» մինչդեռ կապրի ճանապարհ:

Հիրավի ճիշտ է կանխատեսել Շիրազի անմահ բանաստեղծ Սաադին իր ստեղծագործության ապագան: Դարեր են անցել նրա այս տողերը գրվելուց ի վեր, բայց «երջանկության և տխրության բանաստեղծի», ինչպես բնորոշել է նրան Իսահակյանը, երգերը չեն թռչնել և այսօր էլ շնչում են թարմությամբ, գերում իրենց անմիջականությամբ, վարակում խոր մարդասիրությամբ ու ժողովրդայնությամբ և հաճախ ղարմաշնում բանաստեղծի հակասական կենսափրկությանը:

Շեյխ Մոսլեհեդդին Սաադին եղել է այն պարսիկ գրողներից, որոնց ստեղծագործությունները անցել են ողջ միջնադարով, ենթարկվել ժամանակների քննությանը և հասել մեղձ պահպանելով իրենց բույրն ու կենսահաստատ գեղեցկությունը:

Հայ միջնադարյան դրականությունը, որը սերտ կապեր ու շփումներ է ունեցել հեռու ու մոտ շատ դրականությունների հետ, կարող էր արդյո՞ք անհաղորդ մնալ Սաադիի քանքարին, օղորդվորական մեծ հմայք ունեցող նրա երկերին:

Հատնի է, որ հայ-իրանական-պարսկական գրական փոխհարաբերությունների մի նոր փուլ սկսվում է հայ տաղերգության սկզբնավորումով, հարաբերություններ, որոնք մեր բանաստեղծության մեջ իրենց ուրույն դրսևորումն ունեցան Մերձավոր արևելքում ու Միջին Ասիայում տարածված պարսկական բանաստեղծության լեզվա-արտահայտչական հնարանքների անկաշկանդ օգտագործու-

մով: Բայց մեր տաղերգուները հականե հանվանե ո՞ր պարսիկ
գրողների հետ են առնչվել, նրանց հետաքրքրության ու ծանոթու-
թյան սահմանները ինչպիսի՞ք են եղել.—այստեղ արդեն փաստերը
շափազանց ժլատ են:

Սաադիի հետ հայ գրականության ծանոթության վաղ շրջանը
մինչև վերջին ժամանակներս համարվում էր XIX դարի կեսը, բայց
Գեորգ Դպիր Պալատացու (1737—1812) պարսկերեն-հայերեն բա-
ռարանի քննությունը երևան բերեց նրա թարգմանությունները պար-
սիկ դասական գրողներից, այդ թվում նաև Սաադիից, որոնք պետք
է կատարված լինեն 1795—1800 թվականներին¹:

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրերը նոր տվյալներ են
ընձեռում Սաադիի հետ մեր գրականության առնչությունները ավելի
վաղ ժամանակներ տանելու համար: Այդպիսի արժեքավոր ձեռա-
գրերից է № 5954 մատյանը, որ նախապես տաղարան է եղել և հե-
տագայում զանազան բովանդակությամբ հավելումներ կրել: Այս
նյութերից կարելի է ենթադրել, որ ձեռագիրը պատկանելիս է եղել
ինչ-որ գործարար մի մարդու, թերևս վաճառականի, որը տաղարա-
նի դատարկ էջերում գրանցել է իրեն անհրաժեշտ որոշ տեղեկու-
թյուններ, անգամ առանձին քաղվածք 1776 թ. սեպտեմբերի 17-ի
Երևանդու կազէթից: Մի այլ հիշատակագրություն պատկանում է
1774 թվականին (էջ 127-ը): Հավելումների այս բաժնում հայատառ
պարսկերենով կան բազմաթիվ ժողովրդական ասույթներ, աղոթք-
ներ ու փառքեր, ինչպես նաև մի քանի քառյակներ ու բնյթեր:

№ 5954 ձեռագրի էջ 112-ում «Պարսից պէյթեր, առակն է պար-
սերէն» մականգրության ներքո բերված է հետևյալ քառյակը և նրա
գրաբար թարգմանությունը.

Ձի զամ տիւար հիւմմաթիրա,
Քի պաշաթ շիւն թու փիւշթիպան.
Ձի պաք էզ մէվճի պէհրանրա,
Քի պաշաթ նուլի քիւշթիպան:

Ձի՞նչ հոգ ունին աշակերտք քո,
Մինչ ունին զքեզ զգաստ դէտ.
Ձի՞նչ արասցեն ալիք ծովու,
Մինչ ունին զքեզ նաւապետ:

¹ Տե՛ս Բ. Ն. Զ ու գ ա ս ղ յ ա ն, Հայ-իրանական դրական առնչություններ,
Երևան, 1963, էջ 199—200:

Այս քառյակը քաղված է Սաադիի «Գոլեսթանի» հայտնի նախնորգանքից, որի պարսկական բնագիրն ըստ 1348/1929—30 թթ. ռեպինյան հրատարակության հետևյալն է.

چه غم دیوار امت را که باشد چون توپشتیبان
چه باک از موج بحرِ ترا که دارد نوح کشتیبان¹

Բառացի թարգմանությունը.

Ինչ հոգ ունի պարիսպը հավատի,
Երբ կա քեզ պես պաշտպան.
Ինչ վախ [ունի]¹ ծովի ալիքից այն [մարդը],
Որ ունի նույի [պես] նավապետ²:

¹ شیخ مصلح الدین سعدی شیرازی، گلستان، دیرین، ۱۳۴۸، ص ۸۰.
(Շեյխ Մոսեհ հեդդի Սաադի, Գոլեսթան, Բեռլին, 1348/1929—30, էջ 8).
«Գոլեսթանի» որոշ տարբերակներում այս տողերը բացակայում են: Հավանաբար սրանով պիտի բացատրել 1958 թ. հայերեն թարգմանության մեջ այս տողերի պակասը:

Հետաքրքիր է նշել, որ Աստվածաշնչից եկող նույն նահապետի նավապետ լինելու հանդամանքը Կոստանդին Երզնկացու մոտ հետևյալ գեղեցիկ անդրադարձն է ունեցել.

Հովիւ շունինք տեսող ու մենք ենք մոլորեալ ոշխար,
Շատ գայլք են յարձակել ի վերայ մեր խիստ անհամար.
Պիտեր մեղ նաւապետ մարգ կենդանի՝ ղերդ նոյ արդար,
Որ մեղ տապան գործէր, ծովուս լինէր եղր ու վրճար....

Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությանը Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 201:

² Սաադիի «Գոլեսթանի» անվանի հայ թարգմանիչներից Հ. Թիրյաքյանը այս տողերը հետևյալ կերպ է թարգմանում.

«Ինչ հոգ ազգի մ'պատին երբ դու ամուր
պաշտպան կաս իր կըշտին,
Կամ ինչ երկյուղ կա անգունդեն
երբ նույն ինքն է վարող քաշտին»:

(Սաադի, Կոլեստան, թարգմ. Հ. Թիրյաքյան, Նյու-Յորք, 1920, էջ 8):

Հիւմմաթ — 0 մմաթ — امت Բառը մի շարք իմաստներ ունի, այդ թվում՝ ժողովուրդ, ազգ, հավատ, աղանդ, հետևորդներ: Սաադին իր քառյակում զովերգում է Մոհամմեդ մարգարեին, ուստի և միջնադարյան հայ թարգմանիչը նախ-

Ինչպես տեսնում ենք միջնադարյան թարգմանությունը բնագործից այնքան էլ չի հեռացել։ Անհամաձայնությունները մի դեպքում գալիս են միևնույն բառի տարբեր առումների օգտագործումից. մյուս դեպքում թերևս բխում են թարգմանչի միտումից՝ քառյակի իմաստը բանաստեղծորեն ճիշտ վերարտադրել։

Այստեղ, սակայն, մեղ համար կարևորը ոչ թե թարգմանության հարազատության հարցն է, այլ քառյակի թարգմանության առկայությունը հիշյալ մատյանում, որի ժամանակը ձևագրում հիշատակված 1776 թվականից շուտ լինել չի կարող։

Իսկ ո՞վ է հղել թարգմանիչը։

№ 5954 ձևագրի էջ 112-ում, որտեղ ընդօրինակված է քառյակը, կա հետևյալ հիշատակագրությունը. «Քուլթուր անուանեալ Պետրոս վարդապետի շարադրեալ քարոզգրքին թղթահամար 198»¹։

Արդյոք որևէ կապ կա այս հիշատակագրության և քառյակի միջև։ Առայժմ դժվար է որոշակի պատասխան տալ։ Հայտնի է միայն, որ Պետրոս Բ Քուլթուր անունով կրոնական մի գործիչ է հղել XVIII դարի առաջին կեսին և 1748—1749 թթ. կաթողիկոսական գահի վրա է հղել (հավանաբար ոչ օրինական կարգով)։ Նա սպանվել է Ջահուկի մի վանքում ավազակների հարձակման ժամանակ 1750 թվականին²։ Գրականության մեջ հիշատակվում է նաև Պետրոս վարդապետ Քուլթուր անվանվող մի տաղասաց, որ ապրել է նորից XVIII դարում և ամենայն հավանականությամբ նույն Պետրոս Քուլթուրն է։

Քառյակի թարգմանչի անձնավորության բացահայտման համար ուշադրության արժանի և պարսկերեն քառյակի հայկական տառադարձությունը, որը հիշեցնում և՛ արևմտահայ պարսկագետների արտասանությունը՝ ավելի մոտ օսմանյան թուրքերենի հնչյունական համակարգին։ Այսպես. քառյակում պարսկերենի ձայնեղները բանասկզբում խլացված են. օրինակ՝ Բ (ب) > Կ, Դ (د) > Խ, Զ (ز) >

ընտրում է բառի աշակերտներ (իմա՝ հետևորդներ) առումը՝ դուրս նետելով դրան նախադաս տիւար — պատ բառը։ Հ. Թիրյաքյանը տողը մի քիչ ավելի բառացի է թարգմանում՝ «ազգի մը պատին», որով քառյակի իմաստը որոշ չափով մթաղնվում է։ Կարծում ենք, որ տիւար հիւմաթիւրա արտահայտությունը «հավատի պարիսպ» թարգմանելով՝ ավելի հարազատ ենք մնում բնագրին, որտեղ Սաադին ի դեմս իր մարգարեի՝ ակնարկում է մահմեդական աշխարհի անասանությունը։

¹ Մաշտոցյան մատենադարանում պահվող Պետրոս Քուլթուրի Քարոզագրքում ոչ միայն այս քառյակը չկա, այլև չկա որևէ տաղ կամ ոտանավոր։

² Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 259։

ն (պաշաթ, տիւար, մէվն), իսկ ձայնավորներից ձ-ն տառադարձված է ա, ը-ն՝ ի և օ-ն՝ իւ: Քառյակին հաջորդող մատյանի մյուս էջերում՝ դրսևորող հայատառ պարսկերեն մյուս նյութերը տառադարձված են ավելի հարազատորեն՝ պահպանելով պարսկական ժողովրդական արտասանության հնչյունները, ինչպես՝ բ (ب) > բ, դ (د) > դ,

գ (گ) > գ(քըմունի, դաստ, սագ):

Քառյակի մեջ կիրառված կուռ տառադարձությունն ու նրա հայերեն բանաստեղծական գեղեցիկ վերարտադրությունը ենթադրել է տալիս արևմտահայ բանաստեղծ-թարգմանիչ, մի գուցե հենց ինքը Պետրոս Քյուքյուրը, որը այնթապցի էր և երկար տարիներ Պոլսում ևղև էր կաթողիկոսական նվիրակ:

Արդ, եթե ենթադրելու լինենք, որ Պետրոս Քյուքյուրն է կատարել թարգմանությունը, ապա քառյակի թարգմանության ժամանակը պետք է դնել նրա մահվան թվականից (1750) առաջ:

* * *

Սաադիի «Գուլեսթանի» հետ հայ գրականության ավելի վաղ մի ծանոթության մասին վերջերս մատնացույց է արել բանասեր Միհրդատ Թիրյաքյանը¹: Հայերեն Աստվածաշնչի տպագրության 300-ամյակին նվիրված «Սիրոնի» հատուկ թվում Թիրյաքյանը ուշադրություն է դարձրել Ղուկաս Դպիր Վանանդեցու «Գանձ չափոյ» գրքի 1699 թ. հրատարակության հիշատակարանի մասը կազմող հայատառ պարսկերեն մի երկատողի (բեյթի) վրա: Երկատողը, ինչպես հիշտորեն նշել է Մ. Թիրյաքյանը քաղված է Սաադիի «Գուլեսթանից», և մեջ է բերված հետևյալ տառադարձությամբ:

Օմր բարֆ ասթ՝ վա աֆթաթ թամուզ
Անդաքի մանդ՝ վա խօջա դօռահ հանուդ²:

Պարսկերեն բնագրում երկատողը այս տեսքն ունի.

عمر برفست و آفتاب تموز
اندکی ماند که خواجه غره هنوز³

Մ. Թիրյաքյանը հետևյալ կերպ է ընթերցում և թարգմանում.

¹ Տե՛ս Մ. Թիրյաքյան, Հիշատակարանի մը հայատառ պարսկերեն ոտանավորը, «Սիրոն», 1966, հուլիս, էջ 356:

² «Գանձ չափոյ՝ կշռոյ՝ թուոյ և դրամից բոլոր աշխարհի», Ամստերդամ, 1699, էջ 80:

³ Ս ա ա դ ի, Գ ու լ Ե ս Թ ա ն, Բ ե ու ի ն, էջ 13:

Օմր բարֆ ասթ օ աֆթարը թամուզ
Անդաքի մանդ օ խաշէ դըրրահ հանուզ:

Կյանքը ձյուն է հուլիսի արևին տակ.
Շատ քիչ մնաց աղան (տերը) դեռ անհող է:

Հարդելի բանասերի այս հետաքրքիր դիտումը մեզ թելադրեց պրպտելու Ղուկաս Դպիր Վանանդեցու նրևանում առկա նաև մյուս հրատարակությունները և պարզվեց, որ հայ տպագրության այդ հրախտավորի անմիջական մասնակցությամբ Ամստերդամում Թոմա Վանանդեցու տպարանից լույս տեսած երկու գրքում ևս հայատառ պարսկերենով քաղվածքներ կան Սաադիի նույն երկից: Այսպես, «Բնաբանութին իմաստասիրական կամ տարերարանութին» (1702 թ.) գրքի 71-րդ էջում տպագրված է հայատառ պարսկերենով «Գուլեսթանի» ներածության առաջին իսկ բառերին հաջորդող հետևյալ հատվածը.

Հար նաֆասի, քի ֆրու միրօդ մօմմադ հեսթ աստ, վա չուն
բար միայնադ, մօֆառահ դաթ:
Փաս դար հար նըաֆասի դու նըամաթ մօվջուդ աստ, վա բար
հար նըամաթի շուքրի վաջուբ:

Բերենք «Գուլեսթանի» պարսկերեն բնագրի համապատասխան հատվածն ու նրա բառացի թարգմանությունը.

هر نفسی که فرو میروید مجد حیا تست و چون بر می آید مغر ح ذات
پس در هر نفسی دو نعمت موجود است و بر هر نعمتی شکری واجب

Յուրաքանչյուր շունչը, որ ներս է գնում, երկարացնում է կյանքը, և երբ դուրս է գալիս զվարթացնում է էությունը:

Հետևաբար յուրաքանչյուր շնչում երկու բարիք կա, և յուրաքանչյուր բարիքի համար մի փառաբանություն է անհրաժեշտ:

Մյուս գիրքը, որ նույնպես հայատառ պարսկերեն հատված ունի, «Յոգնագիմի աստուածաբանական, բարոյական և քաղաքական իրողութեանց սահմանք» երկասիրությունն է (1704 թ.): Այս

1 «Բնաբանութին իմաստասիրական կամ տարերարանութին...» Յօրինեալ ի Մատթէոսէ և ի Ղուկասէ յապիրատ Վանանդեան դպրաց, Ամստերդամ, 1702, էջ 71:

2 Ս ա ա դ ի, Գուլեսթան, Բեռլին, էջ 7:

գրքի 47-րդ էջից մինչև 58-րդ էջը տպագրված է Ղուկաս Վանանդե-
ցու թարգմանած Արիստոտելի «Յաղագս առաքինութեանց և շարու-
թեանց» երկը, որից անմիջապես հետո բերված է «Գոլեսթանի» նե-
րածության այն քառյակը, որտեղ բանաստեղծը պատկերավոր կեր-
պով իր երկի հավերժությունն է կանխատեսում, քառյակ, որը սույն
հոդվածի համար բնաբան ենք ընտրել.

Բը շի քար այեադթ զըգիւ Թըարադի,
Աղ գիւլըստան ման բըբօր վարադի,
Գիւլ հըամին փէնջ ոռւզ վա շէշ բաշէդ
Վը ին գուլըսթան հըամիշա խօշ բաշէդ:

Ահա և քառյակի ստրսկերեն բնագիրը և բառացի հայերեն
թարգմանությունը.

ازگلستان من بپرورقی
وین گلستان همیشه خوش باشد
بچه کار آیدت زگل طبیعی
گل همین پنجره وشتی باشد

Ի՞նչիդ է պետք վարդի մի թերթը,
Պոկիր մի թերթ իմ «Գոլեսթանից».
Վարդը այս հինգ վեց օրը [կապրի]
[Իսկ] այս «Գոլեսթանը» հավերժ հաճելի կլինի:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Թումա Վանան-
դեցու Ամստերդամի տպարանում լույս տեսած մի շարք գրքերի դա-
տարկ էջերում կամ բաց մնացած մասերում զետեղված են բանա-
ստեղծություններ, սաղմոսներ կամ հայատառ պարսկերեն խոհա-
խրատական ասույթներ: Այսպես, Թումա Գեմբացու «Յաղագս հա-
մահետեմանն Քրիստոսի...» (Ամստերդամ, 1696) գրքում առաջին և
երկրորդ, երկրորդ և երրորդ գրքերի միջև եղած դատարկ էջերում
տպագրված են Գրիգոր Նարեկացուց հատվածներ (էջ 92, 139—140)
այսպիսի ծանոթագրությամբ՝ «Այսքանս. Ղի մի տեղի ինչ մնայցէ
պարապ» (էջ 92): Նույն այս սկզբունքով էլ վերը հիշված երեք գրք-
երում տպագրված են «Գոլեսթանի» հատվածները, որոնք հայերեն
չեն թարգմանված: Այս հանգամանքը ենթադրել է տալիս այդ գրքե-
րի հիմնական ընթերցողների այնպիսի շրջանակ, որ մայրենի լեզ-
վին զուգահեռ իմացել է նաև պարսկերեն:

Ինչ վերաբերում է պարսկերեն այս հատվածների հայկական
տառադարձմանը, ապա պետք է ասել, որ աննշան բացառությամբ

1 Ս ա ա դ ի, Գոլեսթան, էջ 16:

այն ճիշտ է կատարված. մի իրողություն, որ վկայում է Ղուկաս Վանանդեցու պարսկերենի իմացության բարձր մակարդակը:

* * *

Միջնադարյան հայկական բանաստեղծության մեջ առատորեն սփռված պարսկական բառային փոխառությունները հաճախ են հիշեցնում պարսկագիր հեղինակների: Այս տվյալների հիման վրա, սակայն, երբեք էլ հնարավոր չէ պնդել, թե մեր այս կամ այն տաղերգուն, բանաստեղծը որոշակիորեն առնչվել է այսինչ պարսիկ հեղինակին, նրա այսինչ երկին: Բառային փոխառություններից ավելի նպաստավոր են ոճական փոխառությունները, որոնք մերթ ընդ մերթ մատնանշում, հասցեագրում են որոշակի գրողների:

Նման արժեքավոր ոճական հասցեագրումներից է «Պատմութիւն Ֆարման մանկան» միջնադարյան պոեմի մի ամբողջ տողը: Հայտնի է, որ այս պոեմում այնքան շատ փոխառյալ բառեր կան, որ եվրոպական որոշ հայագետների (է. Պրուդոն, Սեն Մարտեն, Ֆր. Մակլեր) հիմք են տվել ենթադրելու, թե պոեմը թարգմանված է պարսկերենից¹: Մի ենթադրություն, որը կասկածի տակ են առել կամ ժխտել են Ա. Զոպանյանը, Մ. Պոտուրյանը, Մ. Աբեղյանը և պոեմի քննական բնագիրը կալմող Շ. Նադարյանը²:

Պոեմի մեզ հետաքրքրող տողը հետևյալն է.

Ասէ... Քարամ տեսէք և լութվ ու յատապ...

(թարգմ. Ասում է.—Վեհանձնությունը տեսեք և շնորհն ու բարեկրթությունը...):

Այս արտահայտությունը որոշակիորեն պատկանում է Սաադիին. վերցված է նրա «Գուլեսթանի» ներածությունից, որտեղ բանաստեղծը «ամենաբարձրյալին» ուղղած իր փառաբանության մեջ ասում է.

کرم بین ولطف خداوندگار

Քարամ բին օ լութֆի խողավանդդար...

(թարգմ. Քարամ տես և լութվը աստուծո...)

կամ՝ Վեհանձնությունը տես և շնորհը աստուծո):

¹ Տե՛ս «Անահիտ», 1904, № 3, էջ 63:

² Տե՛ս անգլ. «Բազմավեպ», 1807, № 4, էջ 189—190: Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. Բ, էջ XII: «Պատմութիւն Ֆարման մանկան», հրատ. պատրաստեց Շ. Նազարյանը, 1957, էջ 15—23:

Ինչպես տեսնում ենք, Ֆարման մանկան պատմության տողի և «Գոլեսթանի» տողի տարբերությունը միայն մի բառի մեջ է. Սատգիի մոտ աստված է գովերգվում, իսկ հայ հեղինակը նույն խոսքերով իր հերոսուհու գովքն է հյուսում: Հայկական բնագրում տողի վերջին յատապ ըստը հանգի ու բարեհնչունության համար հարմարեցված է հաջորդ տողերի ավթապ, տառ խապ, շաֆրլապ բառերին:

Թերևս ենթադրվի, որ տողը փոխառյալ է ժողովրդական բառ ու բանից: Այս ենթադրությունը ընդունելի չէ, որովհետև այդ արտահայտությունը ժողովրդական մտածողության պարզությունն ու անմիջականությունը չունի, իսկ շարահյուսությունը միանգամայն հեռու է ժողովրդական անպաճույճ ձևերից. անգամ հայերեն թարգմանությունից էլ երևում է անհատական ստեղծագործության կնիքը, հատկապես նրա վերամբարձությունը, որը բնորոշ է «Գոլեսթանի» այս ներածությանը: Խնդրո առարկա տողը Սաադիի մոտ բերված է հետևյալ բեյթում.

کرم بین و لطف خداوندگار
گنه بند کز ده است و آویش...

Քարամ բին օ լոթֆի խոդավանդգար
Գոնահ բանդե քարդե ասթ օ ու շարմասար.

(Թառգմ. Վեհանձնությունը տես և շնորհը աստուծո.
Մեղքը ստրուկս է կատարել և նա է ամոթահար):

«Պատմութիւն Ֆարման մանկան» պոեմի այս արժեքավոր տողը մեզ իրավունք է տալիս հայ գրականության ժանոթությունը Շիրազի անմահ երգչի հետ երեք հարյուրամյակով հտ տանել և դնել 15-րդ դարի սկզբները, մի ժամանակաշրջան, երբ հավանաբար ստեղծվել է Ֆարման մանկան պատմությունը:

Վերը թվարկված փաստերը ինքնին հայ-պարսկական գրական առնչությունների հենքի մի փոքրիկ հատվածն են կազմում, սակայն նպաստում են բացահայտելու հայ գրականության մեջ պարսկականի թափանցման ոլորտները և, մասնավորապես, հայ հեղինակների համար Սաադիի երկերի հոգեհարազատության աստիճանը, որի հետևանքով և նրա բառ ու բանը բնականորեն մուտք է գործել մեր գրականության մեջ:

1 Ս ա ա դ ի, Գոլեսթան, էջ 9:

2. Երկատու Ջալալ էդ-Դին Ռումիից

Պարսից դասական գրողներից միջնադարում հայերեն թարգմանված հազվագյուտ նմուշներից է Ջալալ էդ-Դին Ռումիի (1207—1272) մի երկտողը, որը պահպանված է Մաշտոցյան մատենադարանի № 6146 ձեռագրում, ժամանակ՝ 1700 թ.:

Երկատողը այս մատյանում հայատառ պարսկերենով ու գրաբար թարգմանությամբ բերված է ի հաստատումն աստվածային արարքների անքննելիության ու զարմանահրաշության. այսպես՝

«Հազար քաշթի բա եկ դարիայ չի աճէպ աստ
Ռ[հազար] դարիայ բայ եկ քաշթի աճէպ ան աստ.
Լուծումն՝

Ռ[հազար] նաւ ի Ա [մէկ] ծով ինչ զարմանք է.
Ռ[հազար] ծով ի Ա [մէկ] նաւ զարմանք և հիանալի է:

Լուծումն՝

Թէ աստուած զարարածս տանի չէ զարմանք»¹:

Այս երկատողը Ռումիի հետևյալ քառյակի երկրորդ երկատողի մի տարբերակն է: Քառյակը երկու անգամ օգտագործված գտանք 1901—1902 թ. Թեհրանում լույս տեսած «Մասնավիում».

کشتی وجود مرد دانا عجبست
افتاده بچاه مرد بینا عجبست
کشتی که بدریا بود آن نیست عجب
دریک کشتی هزار دریا عجبست²

Քաշթի վջուդ մարդն դանա աջաբ ասթ.
Օֆթադն բեչահ մարդն բինա աջաբ ասթ.
Քաշթի քե բեդարիա բովադ անն իսթ աջաբ,
Դար եք քաշթի հեզար դարիա աջաբ ասթ:

¹ Մաշտոցյան մատենադարան, ձեռ. 6146, էջ 48—ա:

² مثنوی معنوی مولانا جلال الدین محمد بلخی رومی باهفت کتاب
تفیس دیگر ، بتصحیح و معیّنه و همت محمد مضانی ، ۱۳۱۹ ، تهران ،
۱۴ ص ، ۳ (Ջալալ էդ-Դին Մոհամմեդ Բալխի Ռումի, Մասնավի մասնավի և յոթ
այլ ընտիր երկեր, աշխատասիրությամբ Մոհամմադ Ռամազանիի, Թեհրան,
1319/1901—02, էջ 3 և 14):

Բառացի թարգմանությունը.

Իմաստուն մարդու ներկայությունը նավի մեջ զարմանալի է.

Հորի մեջ տեսունակ մարդու ընկնելը զարմանալի է.

Նավը, որ ծովի վրա լինի, զարմանալի չէ,

Մեկ նավում հազար ծով լինելն է զարմանալի:

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան հայերեն թարգմանության մեջ հարազատորեն վերարտադրված է երկատողի բառացի իմաստը, որի անորոշությունն ու խորհրդավորությունն էլ պետք է եղել թարգմանչին, մինչդեռ իրականում Ռումին, որ սուֆի բանաստեղծ է, բառախաղով վերջին տողում տվել է ծովի սուֆիական նշանակությունը, այն է՝ աստվածային էակ իմաստով:

Հայատառ պարսկերեն այս և Ռումիից վերը բերված քառյակի երկատողերի մեջ կան փոքրիկ տարբերություններ. հայկական տարբերակը առաջին տողում մեկ նավի փոխարեն հազար նավ է դնում, իսկ երկրորդ տողում կա բառերի ետևառաջություն. հայկական տարբերակում մեջ բառը օգտագործված է բա (ل) արխաիկ պարսկերեն ձևով, մինչդեռ Ռումիից մեր բերած տարբերակում կիրառված է ավելի ուշ ժամանակների դար (رد) ձևը: Այս հանգամանքը խորհել է տալիս, որ հայ թարգմանչին հայտնի է եղել Ռումիի քառյակի մի ավելի հնագույն տարբերակ, որից և նա թարգմանել է:

Ծրկատողի հայ թարգմանչի ինքնությունը առայժմ մեզ հայտնի չէ. պարսկերենի հայկական տառադարձումից հաստատորեն միայն կարելի է ասել, որ նա եղել է Արևելյան Հայաստանից:

Այս երկատողը Ջալալ էդ-Դին Ռումիից առայժմ մեզ հայտնի առաջին հայերեն թարգմանությունն է:

Б. Л. ЧУКАСЯН

ARMENO-PERSIACA

Резюме

В истории армяно-персидских литературных связей особое место принадлежит Саади. До последнего времени считалось, что знакомство армянской литературы с творчеством великого певца Шираза началось с последних десятилетий XVIII века. Тщательное изучение армянских руко-

писей Матенадарана им. М. Маштоца и старопечатных армянских книг выявило новые данные, по которым знакомство армянской литературы с Саади можно отнести к XV веку. В данной статье приведены эти новые факты.

Во второй части статьи публикуется вариант одного двустишия Джалал эд-Дина Руми, сохранившийся в армянской рукописи 1700 года.